ՓԱԿՎԵՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պատմության ու փիլիսոփայության բաժանմունքի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքի՝ Հայաստանում սովետական կարգերի 30-ամյակին նվիրված համատեղ գիտական սեսիայի վերջին նիստը։

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Վ. Ն. Լազարևը զեկուցեց Վերածնության պրոբլեմի մասին։ Զեկուցողը նշեց, որ ժամանակակից բուրժուական ռեակցիոն պատմագրությունն ամեն կերպ աշխատում է ժխտել Վերածնության պրոբլեմը, անտեսել կամ նսեմացնել Վերածնության շրջանի կուլտուրայի խոշոր պրոգրեսիվ բնույթը և նրա նշանակությունը կուլտուրայի հետագա զարգացման գործում։ Դրանով իսկ բուրժուական, մանավանդ ամերիկյան գիտնականները բացահայտորեն բռնել են պատմության ֆալսիֆիկացիայի ուղին, որպեսզի կարողանան «հիմնավորել» հրենց ռեակցիոն, հակադիտական տեսակետները։

«Վերածնության պրոբլեմը Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վ. Կ. Զալոյանը։ Վերլուծելով հայկական Վերածնության շրջանի գաղափարախոսության տարբեր ձևերը, զեկուցողը նշում է, որ այդ շրջանի փիլիսոփայության, գրականության և արվեստի մեջ արտահայտվող գաղափարներն ու մտքերը հակադրվում էին հայ եկեղեցու դոգմատիկային և կրոնական աշխարհայեցողությանը։

Վ. Ն. Լազարևի և Վ. Կ. Զալոյանի զեկուցումների շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին գրականագետ Ա. Կարինյանը և պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը։

Հանրագումարի բերելով սեսիայի աշխատանքները, ակադեմիկոս Ե. Ա. Կոտմինսկին ասաց.

— Մեր սեսիան հանդիսացավ Սովետական Միության ռեսպուբլիկաների գիտնականների բարեկամական, ստեղծագործական կապի փայլուն արտահայտություն։ Թող այդ բարեկամությունն է՛լ ավելի ամրանա։ Սովետական ժողովուրդների անխախտ բարեկամությունը, սովետական գիտնականների ստեղծագործական համերաշխությունն է՛լ ավելի է ամրապնդում մեր Հայրենիքի հզորությունը։ Սովետական գիտությունն ամենաառաջավորն է աշխարհում։ Ի տարբերություն բուրժուական ռեակցիոն գիտության, որը լրիվ ծախվել է իմպերիալիստներին, մեր գիտությունը, հավատարիմ մեծ Ստալինի հանճարեղ ցուցումներին, ծառայում է ժողովրդի շահերին, կոմունիզմի կառուցման գործին։

Կեցցե՞ ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը։

Կեցցե՞ մեր մեծ առաջնորդ և ուսուցիչ, մեծագույն գիտնական Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինը։

Սեսիայի հաստեղով ողջույնի հեռագրեր են ստացվել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահությունից, ինչպես նաև ակադեմիկոսներ՝ Բ. Գրեկովից և Ե. Տարլեից։